

Գործոնների ներդրման արդյունավետությունը

Շահույթը և գույքի շահույթը ցույց են տալիս միայն արդյո՞ք աշխատուժի, կապիտալի և հողի գործոնների ներդրումը արդյունավետ է, թե ոչ: Սակայն, դրանք ցույց չեն տալիս, թե որքանով է արդյունավետ գործոնի ներդրումը:

Այս գլուխը տալիս է հետևյալ հարցերի պատասխանները՝

- Որքա՞ն բարձր է կապիտալի հատույց,
- Որքա՞ն է աշխատուժի հատույցը:
- Որքա՞ն բարձր է օգտագործված հողատարածքի հատույցը:

Գործոնների ներդրման արդյունավետությունը որոշելու և այլընտրանքների հետ համեմատելու հնարավորություն ունենալու համար պետք է հաշվել արտադրանքի/թողարկման և ծախսերի միջև եղած տարբերությունը՝ գործոնի մեկ միավորի հաշվով: Ըստ որում, պետք է հաշվի չառնել ներդրված գործոնների ծախսերը:

- դրամական միավոր՝ օգտագործված կապիտալի 100 դրամական միավորի հաշվով (= %)
- դրամական միավոր՝ աշխատանքի 1 ժամվա հաշվով (ժամ)
- դրամական միավոր՝ օգտագործված հողի 1 հեկտարի հաշվով

Գործոնի հատույցի հաշվարկը կարող է կատարվել՝

- օգտագործված գործոնների՝ աշխատուժի, կապիտալի և հողի (փոխառու և սեփական) ընդհանուր քանակի համար , և
- սեփական գործոնների համար (ընտանեկան աշխատանք, սեփական կապիտալ, սեփական հող):

Առաջին դեպքում փոխառված գործոնների, ինչպես նաև այլընտրանքային ծախսերը հաշվի չեն առնվում, և այն բաժանվում է օգտագործված գործոնների ընդհանուր քանակի վրա: Երկրորդ դեպքում միայն սեփական գործոնների այլընտրանքային ծախսերը հաշվի չեն առնվում, և այն բաժանվում է օգտագործված սեփական գործոնների քանակի վրա:

Գործոնի հատույցի հաշվարկի սխեման հետևյալն է՝

Համախառն արտադրանք

(արտադրանքի քանակ x գին + ուղղակի վճարումներ)

- ծախսերի բոլոր հոդվածներ, ԲԱՏԱՌՈՒԹՅԱՄԲ գործոնների ծախսերի *)
= Գործոնի հատույց մեկ հա-ի համար
/ Գործոնի ներդրումը մեկ հեկտարի հաշվով *)
= Գործոնի հատույցը գործոնի յուրաքանչյուր միավորի ներդրված հաշվով:

*) փոխառված + սեփական գործոններ կամ միայն սեփական գործոններ:

Մեկնաբանություն

Որպեսզի կարողանանք վերլուծել գործոնի ներդրման արդյունավետությունը՝ գործոնի հատույցի հիման վրա, գործոնի հատույցը պետք է համեմատվի գործոնի ծախսերի հետ: Գործոնի ներդրումը շահութաբեր է, եթե դրա հատույցն ավելի բարձր է, քան դրա ծախսը (կամ գոնե դրան հավասար է):

Հաշվարկվող օրինակում գործոնի ներդրման արդյունավետությունը ցածր է դրա ծախսերից, հետևաբար, գործոնի ներդրումը երկարաժամկետ հեռանկարում շահութաբեր չի համարվում: Միայն սեփական գործոնների պարագայում դա կնշանակի, որ այլընտրանքների օգտագործումը երկարաժամկետ հեռանկարում կարող է տնտեսապես ավելի ընդունելի լինել:

Գործոն		Միավոր	Հատույց		Ծախսեր
Կապիտալ	Ընդամենը	%	2.5	<	5.6
	Սեփական	%	0.8	<	5.0
Աշխատուժ	Ընդամենը	€/ժամ	7.37	<	10.15
	Սեփական	€/ժամ	7.00	<	10.00
Հող	Ընդամենը	€/հա	201.69	<	235.0
	Սեփական	€/հա	169.48	<	225.0

Ընդհանուր կապիտալի, աշխատուժի և ընդհանուր հողի ներդրման ծախսերը փոխառու գործոնների ծախսերի միջին արժեքների և սեփական գործոնների այլընտրանքային ծախսերի արդյունքն են:

Գործոնների ներդրման երկարաժամկետ և կարճաժամկետ արդյունավետություն

Քանի որ հաշվարկը կատարված է ընդհանուր ծախսերի (փոփոխական և հաստատուն) հիման վրա, բոլոր արդյունքները պետք է դիտարկվեն որպես օգտագործված գործոնների երկարաժամկետ արդյունավետություն: Ձև 2-ում զուտ շահույթի փուլային հաշվարկին համահունչ, գործոնի ներդրման կարճաժամկետ (այսինքն՝ հաշվի առնելով միայն փոփոխական ծախսերը՝ առկա մեքենա-սարքավորումների և շենքերի հաստատուն հզորությունների հետ միասին) արդյունավետության հաշվարկը ևս կարող է կատարվել: Այս եղանակով հաշվարկված ցուցանիշները լավ գործիք են՝ ֆերմերային տնտեսությունների հարաբերական տնտեսական արդյունավետության չափման համար՝ առկա հաստատուն հզորությունները ունեցող ֆերմայի ծրագրավորման շրջանակներում:

Գործոնի ներդրման կարճաժամկետ արդյունավետության հաշվարկը, ինչպես նաև արդյունավետության բոլոր ցուցանիշների հաշվարկը, ներկայացված է հաշվարկման Ձև 5-ում:

Ինչ վերաբերում է գործունային կապիտալին, ապա հարկ է նշել, որ կապիտալի կարճաժամկետ հատույցի հաշվարկման դեպքում միայն ընթացիկ ակտիվների համար կապիտալի պահանջն է հաշվի առնվում (ի տարբերություն ընդհանուր կապիտալի երկարաժամկետ հատույցի հաշվարկի):

Նույն ձևով, աշխատուժի կարճաժամկետ արդյունավետության հաշվարկման դեպքում հաշվի են առնվում արտադրության համար աշխատելու պահանջվող ժամանակի պահանջները (բացառությամբ ընդհանուր աշխատուժի):

4.4 Շեմային գևեր

Ֆերմերային տնտեսության շահութաբերության վերլուծությունը կարող է իրականացվել նաև արտադրանքի գինը համեմատելով արտադրության միավորի ծախսերի հետ: Միավորի ծախսերը (միջին ծախսերը) հաշվարկվում են արտադրության ծախսերը բաժանելով արտադրության քանակի վրա:

Եթե ծախսերը կատարվել են ոչ միայն մեկ արտադրանքի արտադրության, այլև մի քանի զուգակցող արտադրանքների արտադրության համար, ապա վերջիններիս արժեքը պետք է հաշվի առնել արտադրության ծախսերի որոշման մեջ՝ հիմնական արտադրանքի գնի համեմատության համարժեք չափող գործիքամիջոց ունենալու համար համար: Նույն կանոնը կիրառվում է նաև այն դեպքում, երբ ուղղակի վճարումները (ինչպես օրինակ ոչ շուկայական արտադրանքը) ներառված են համախառն արդյունքի մեջ: Այս ճշգրտման պատճառը կարելի է հեշտությամբ բացատրել:

Վերը բերված հաշվարկից պարզ է, որ (զուտ) շահույթը պետք է լինի առնվազն հավասար գրոյի, որպեսզի շահութաբերության սահմանը հասանելի լինի:
Չուտ շահույթի պարզեցված հաշվարկը հետևյալն է՝